Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

« 05 » հունվարի 2024թ.

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-23/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության և «Շին Նախագիծ» ՍՊԸ-ի միջև 29.08.2023 թ.-ին, մեկ անձից գնման ձևով, կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-23/6» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ ՀՀ ԱՆ «Աբովյան», «Սևան» և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկներում շինարարական աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման վերաբերյալ, որի ընդհանուր գումարը կազմել է 1.264.200 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի՝ «Շին Նախագիծ» ՍՊԸ-ն ստանձնել է հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը, սակայն պատշաճ ձևով չի մատուցվել ծառայությունները, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից բազմիցս այդ մասին զգուշացվել է՝ թե բանավոր, թե գրավոր (թվով հինգ գրություններ՝ 07.09.2023թ., 14.09.2023թ., 22.09.2023թ, 12.10.2023թ. և 25.12.2023թ.): ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ուղարկված գրություններին «Շին Նախագիծ» ՍՊԸ-ն ոչ մի անգամ չի արձագանքել և չի ձեռնարկել համապատասխան քայլեր:

«Շին Նախագիծ» ՍՊԸ-ի աշխատակիցները չեն իրականացրել Պայմանագրով ստանձնված պարտավորություններն, ինչպես նաև ոչ մի կերպ կապ չեն հաստատել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության համապատասխան աշխատակիցների հետ: Իրականացվող շինարարական աշխատանքների ողջ ընթացքում պատշաճ չեն հետևել կատարվող աշխատանքներին, իսկ շին. հրապարակ այցելել են մի քանի անգամ, որոնք կրել են ձևական բնույթ: Այն ինչ՝ համաձայն Պայմանագրի, «Շին Նախագիծ» ՍՊԸ-ն պարտավոր էր ամբողջ շինարարության ընթացքում պատշաճ և ժամանակին իրականացնել հեղինակային հսկողությունն, ապահովելով շինարարության իրականացման համապատասխանությունը հաստատված աշխատանքային նախագծին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագիրի 2.1.3 կետը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը, ղեկավարվելով գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերով, միակողմանի, հրաժարվել է կնքված պայմանագրից, հետևաբար՝

2023թ.-ի դեկտեմբերի 29-ին միակողմանի ամբողջությամբ լուծվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Շին Նախագիծ» ՍՊԸ-ի միջև 29.08.2023թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-23/6» ծածկագրով պայմանագիրը՝ 1.264.200 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-23/6» ծածկագրով գնման պայմանագիրը կնքվել է մեկ անձից գնման ձևով և «Շին Նախագիծ» ՍՊԸ-ն չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումներ, ուստի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետի՝ «Շին Նախագիծ» ՍՊԸ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-23/6» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Շին Նախագիծ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

Մասնակցի				Գնման ընթացակարգի ծածկագիրը
անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	
«Շին Նախագիծ» ՍՊԸ	04225682	Ք. Երևան, Գարեգին Նժդեհ 46	**«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետ. Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:**	«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-23/6»

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԿԱՄՈ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ**